

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.093>

History of Local Self-Government Bodies of Dilijan Province in 1918-1920

Anna Asatryan

<https://orcid.org/0000-0001-7037-9915>

ASUE lecturer, PhD

annaedisoniasatryan@gmail.com

Keywords: Dilijan, local government body, council, department, democracy, elections, party.

The article highlights the history of the creation and activities of the first provincial local self-government bodies in Armenian reality. The important significance of the establishment of the provincial local self-government in Dilijan in February 1918 in a difficult political situation and the ways of the latter to overcome the crisis of the administration of the province with a mixed population, which was associated with inter-ethnic conflicts, food procurement and other issues of socio-economic and security significance, were presented. It was found out why the government of the country changed the main staff of local government after the declaration of independence of the RA.

In the article we referred to the democratically organized local government elections on September 21, 1919, the pre-election and post-election processes. We also pointed out the successful initiatives and inactions of the executive body of local self-government, which had a direct impact on changing the quality of life of the population of the province, because schools, hospitals, orphanages, food outlets and other important institutions were under the authority of the department.

The reasons for the abnormal functioning of local self-government in Dilijan province, which were largely due to the anti-state actions of the Bolsheviks, intra-party conflicts and other factors, were highlighted.

Դիլիջանի գավառի տեղական ինքնակառավարման մարմինների պատմությունը 1918-1920թթ.

Աննա Ասատրյան

ՀՊՏՀ դասախոս, պ.գ.թ

Հիմնաբառեր՝
ինքնակառավարման

Դիլիջան, տեղական
մարմին, խորհուրդ,

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 93-107



Received: 05.06.2024

Revised: 06.07.2024

Accepted: 31.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

վարչություն, ժողովրդավարություն,
ընտրություններ, կուսակցություն:

Հողվածում լուսաբանվում է հայ իրականության մեջ առաջին գավառային տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծման և գործունեության պատմությունը: Ներկայացվել է, թե որքան կարևոր նշանակություն ունեցավ 1918 թ. փետրվարին քաղաքական բարդ իրավիճակում Դիլիջանում գավառային ՏԻՄ-ի ստեղծումը, և վերջինս ինչպե՞ս կարողացավ հաղթահարել խառը բնակչություն ունեցող գավառի կառավարման ճգնաժամը, որը առնչվում էր միջէթնիկական կոնֆլիկտների, պարենի ձեռք բերման և սոցիալ-տնտեսական և անվտանգային նշանակության այլ հիմնախնդիրներին: Պարզաբանվել է, թե ինչու՞ ՀՀ անկախության հռչակումից հետո պետական իշխանությունը փոխեց ՏԻՄ-ի հիմնական կազմը:

Հողվածում անդրադարձել ենք 1919 թ. սեպտեմբերի 21-ին, ժողովրդավարական սկզբունքների հիման վրա կազմակերպված ՏԻՄ ընտրություններին, նախընտրական և հետընտրական գործընթացներին: Մատնանշել ենք նաև ՏԻՄ-ի գործադիր մարմնի՝ վարչության հաջողված ձեռնարկումները և բացթողումները, որոնք անմիջական ազդեցություն են ունեցել գավառի բնակչության կյանքի որակի փոփոխության վրա, քանզի վարչության ենթակայության տակ են գտնվել դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ, սննդատու կայաններ և կարևոր նշանակության այլ հաստատություններ:

Վերհանվել են Դիլիջանի գավառային ՏԻՄ-ի ոչ բնականոն գործելու պատճառները, որոնք մեծապես պայմանավորված էին բոլշևիկների հակապետական քայլերի, ներկուսակցական կոնֆլիկտների և այլ գործոնների հետ:

История органов местного самоуправления провинции Дилижан 1918-1920 гг.

Анна Асатрян

Преподаватель АГЭУ, к.п.н.

Ключевые слова: Дилижан, орган местного самоуправления, совет, департамент, демократия, выборы, партия.

В статье освещается история создания и деятельности первого в армянской действительности провинциального органов местного самоуправления. Была обозначена важность создания провинциального ОМС в Дилижане в период сложной политической ситуации в феврале 1918 г., и как он помог преодолеть кризис управления провинцией с многонациональным, сталкивающимся с межэтническими конфликтами, населением, с закупками продовольствия и другими социально-экономическими проблемами и проблемами безопасности. Были изложены причины смены основного состава ОМС государственной властью РА после провозглашения независимости.

В статье мы коснулись, основанных на демократических принципах, выборов 21-ого сентября 1919 г. в ОМС, а также предвыборных и поствыборных процессов. Кроме того, мы

постарались указать на успешные начинания и упущения исполнительного органа местного самоуправления, оказывающего непосредственное влияние на изменение качества жизни населения провинции, поскольку в подчинении управления находились школы, больницы, детские дома, пункты питания и другие важные учреждения.

Были выявлены причины некорректного функционирования местного самоуправления провинции Дилижан, во многом обусловленные антигосударственными шагами большевиков, внутривластными конфликтами и другими факторами.

* * *

Ներածություն: Պետությունների պետականաշինության համար կարևոր նշանակություն ունի ՏԻՄ համակարգը, որի գործունեությունը նպատակաուղղված է երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և կազմակերպչակառավարական բնույթի հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը:

Ներկայացվող թեմայի ուսումնասիրման անհրաժեշտությունը կարևոր է ոչ միայն հայոց պետականության պատմության ամբողջացման համար, այլ նաև համահունչ է ՀՀ ներկա այն գործընթացներին, որոնք ուղղված են ՏԻՄ համակարգի կայացմանը:

Շարադրանքի աղբյուրագիտական հիմքը կազմում է Հայաստանի ազգային արխիվի տարբեր ֆոնդերում պահվող արխիվային վավերագրերը, որոնցից առաջնային նշանակություն ունի 201 ֆոնդի նյութերը: Մեթոդաբանական առումով նյութը շարադրվելիս առաջնորդվել ենք պատմահամեմատական, պատմաքննական և այլ մեթոդներով:

Ժողովրդավարական սկզբունքների վրա հենված ՏԻՄ համակարգի գաղափարը հայ իրականության մեջ ներխուժել էր հիմնականապես ռուսական առաջադեմ հասարակական-քաղաքական շրջանակներից, որոնք էլ, իրենց հերթին, կրում էին եվրոպական գաղափարական ազդեցություն: Հայտնի է, որ 19-րդ դարում Եվրոպայի մի շարք երկրներում արդեն իսկ կային ժողովրդավարական բարեփոխումների արդյունքում ձևավորված մունիցիպալ համակարգեր:

19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանում ևս գերիշխող էր վերոնշյալ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: Ի թիվս այլ բարեփոխումների, 1864 թ. հունվարի 1-ին Ալեքսանդր 2-րդը ստորագրեց զեմստվոյական հաստատությունների¹ կանոնադրության գործածության մասին օրենք՝ փորձելով այդ ճանապարհով մեղմացնել հասարակության ներսում օրըստօրե խորացող սոցիալ-տնտեսական և քաղաքական դժգոհությունները:

Սակայն հարկ է նշել, որ ցարական իշխանությունների «զեմստվոյական» բարեփոխումները չկիրառվեցին կայսրության ազգային ծայրամասերում, այդ թվում՝ հայկական գավառներում: Մի կողմից դա պայմանավորված էր ռուսական վարչակարգի քաղաքական կամքի բացակայությամբ, ծավալապաշտական քաղաքականությամբ, մյուս կողմից՝ այն հանդիպեց անդրկովկասյան հասարակաքաղաքական որոշ ուժերի դիմադրությանը: Նրանք պահանջում էին, նախքան տեղական ինքնակառավարման (զեմստվո) մարմինների ընտրությունները,

¹ Չեմստվոն թարգմանվել է տարբեր կերպ՝ «հողապետություն», «համայնավարություն», «տեղավարություն», սակայն Մ. Աբեղյանն առաջարկել էր օգտագործել «տեղական ինքնավարություն» եզրույթը (Հառաջ, 5. 03. 1920, 2): ՀԱԱ արխիվային նյութերը վկայում են, որ պաշտոնական գրագրություններում լայնորեն կիրառվել է «գավառային ինքնավարություն» եզրույթը, հետևաբար՝ վերոնշյալ հոդվածում ևս նպատակային ենք համարում այն օգտագործել:

Դիլիջանի գավառի տեղական ինքնակառավարման մարմինների պատմությունը 1918-1920թթ.

Անդրկովկասում կատարել վարչատարածքային բաժանում՝ ազգային-էթնիկ սկզբունքով: Ի դեպ, այդ ուղեծիրն հիմնականում պաշտպանում էին հայ քաղաքական շրջանակները: Բանն այն էր, որ Կովկասի (Կովկասի փոխարքայություն) 10 նահանգներից միայն Երևանի նահանգում էին հայերը կազմում մեծամասնություն՝ 1.114.438 բնակչությունից 669.871 հայեր էին, 373.582՝ թուրքեր, 36.508՝ քրդեր, իսկ 47 գավառներից հայերը բացարձակ մեծամասնություն էին կազմում միայն 6 գավառում՝ Գանձակում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Երևանում, Էջմիածնում, իսկ համեմատական մեծամասնություն էին կազմում Բորչալուում, Թիֆլիսում, Կարսում, Կաղզվանում: Փաստորեն, վարչական նոր բաժանումներն անհրաժեշտություն էին, այլապես, գավառային ՏԻՄ-երի ընտրություններում հայերի պարտությունն անխուսափելի էր: Սակայն, ինչպես նշում էր Ա. Խատիսյանը, տվյալ ժամանակաշրջանում անկարելի էր բացորոշ հայտնել դրա մասին, և, որպեսզի հայերը չմեղադրվեն «նեղ ազգասիրության» մեջ, ստիպված էին առաջ քաշել երկրորդական բնույթի փաստարկներ՝ դաշտային մշակույթի առանձնահատկությունները, քոչվորների խնդիրը և այլն [Խատիսյան, 1932, 102-104]:

Հարկ է նշել, որ թե՛ Ժամանակավոր կառավարության, թե՛ Անդրկովկասյան կոմիսարիատի կառավարող վարչախմբերի կողմից վերոնշյալ բարեփոխումների՝ հայկական բնակավայրերում չգործադրումը ևս պայմանավորված էր նահանգների, գավառների սահմանազատման խնդրահարույց հարցի հետ: Ի դեպ, 1917 թ. Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից վիճելի հռչակվեցին բուն հայկական և մահմեդականների հետ համատեղ բնակություն ունեցող բնակավայրերը՝ Երևանի նահանգը, Կարսի շրջանի Կարսի և Կաղզվանի գավառները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները, Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլի, Շուշիի, Ջանգեզուրի, Կարյազինոյի գավառները: Վերոնշյալ կառավարությունների որոշումներով այս բնակավայրերում ՏԻՄ ընտրությունները հետաձգվեցին՝ մինչև սահմանաբաժանման ավարտը: Սակայն, պայմանավորված տարբեր քաղաքական դրդապատճառներով, սահմանազատման գործընթացը անընդհատ ձգձգվում էր, հետևաբար՝ վերոնշյալ ընտրությունների կազմակերպման հարցը ևս առկախվում էր:

Դիլիջանի գավառային ՏԻՄ-ի ձևավորումը և գործունեությունը: 1917-1918 թթ. քաղաքական հարափոփոխ գործընթացներով պայմանավորված, տարածաշրջանում իրադրությունը դարձավ ավելի պայթյունավտանգ. գավառներում տիրում էր անիշխանություն՝ իր բոլոր բացասական հետևանքներով՝ մասսայական թալան, սպանություններ, միջէթնիկական բախումներ և այլն: Այդ ամենից գերծ չէր մնում նաև նաև Ելիզավետպոլ գավառը. ուստի՝ տեղի հասարակական-քաղաքական ուժերի համար հրամայական պահանջ էր ինքնակազմակերպվելը: Այսպես՝ 1918 թ. փետրվարի 5-ին գումարվեց գավառի 52 գյուղի ներկայացուցիչների (80 հայ, 12 մուսուլման, 6 մոլդկան) համագումար, և որոշվեց ստեղծել գավառային ինքնավարություն՝ գավառային խորհուրդ (այսուհետև՝ Խորհուրդ) և վարչություն (այսուհետև՝ Վարչություն): Դիլիջանի առողջարանի բժիշկ Ա. Մելքոնյանի նախագահությամբ ձևավորվեց ՏԻՄ գործադիր մարմինը՝ Վարչությունը, որի մեջ ներգրավվեցին գավառի մի շարք ազգությունների ներկայացուցիչները՝ 3 հայ, 2 մահմեդական, 1 մոլդկան [Պայքար, 17.02.1918, 4]: Մեկ տարի ժամանակով ընտրված Դիլիջանի Վարչության կազմը հավանաբար փոփոխվել է, քանի որ մեկ այլ աղբյուրի համաձայն՝

վարչության անդամներից չորսը եղել են հայեր՝ Ա. Տեր-Սարգսյանը, Գ. Մուրադյանը, Գ. Աթաբեկյանը, Ն. Ջաղերյան, մեկ մոլդկան՝ Վ. Վիսոչկին, մեկ մահմեդական՝ Բալա Էֆենդին [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 33-38]:

Հարկ է նշել, որ բազմազգ բնակչություն ունեցող այս գավառում ՏԻՄ ստեղծելն ունեցել է նաև քաղաքական ենթատեքստ: Այսպես, ըստ Ա. Խոնդկարյանի, այդ ամենի նախաձեռնողների՝ էսեռների վերջնական նպատակն էր, տեղական ինքնակառավարման համակարգի միջոցով այդ վիճելի տարածքը՝ Ելիզավետպոլ գավառը, խաղաղ ճանապարհով, բոլոր տարրերի միահամուռ համաձայնությամբ, հայկական պետության միացնելը [Խոնդկարյան, 1934, 90-92]: Վերոհիշյալ նախաձեռնությունը պաշտպանում էին նաև ՀՅԴ և ՀԺԿ, որոնք, բնականաբար, դժգոհ էին Կոմիսարիատի 1917 թ. նոյեմբերի 24-ի որոշումից, ըստ որի՝ հայաշատ Ելիզավետպոլ գավառը ևս համարվել էր վիճելի տարածք: Անդրկովկասյան կառավարությունը՝ ի դեմս Ա. Չխենկելու, հրաժարվեց ճանաչել գավառային ինքնավարության օրինականությունը: Սակայն, ի հեճուկս վերջինիս, Հայոց Ազգային խորհուրդը ճանաչեց և հաստատեց ինքնավարության համագումարի որոշումները [Ժողովրդի ձայն, 16.10.1918, 3]:

Գավառի վարչական սահմաններն առավել հստակեցվեցին ՀՀ անկախության հռչակումից հետո. Ալեքսանդրապոլի և Ելիզավետպոլի (Ղազախ) գավառների որոշ բնակավայրերի միավորմամբ ստեղծվեց Դիլիջանի գավառը, որն ուներ 2300 ք/վերստ տարածք, 130 հազ. բնակիչ: Այն բաժանվեց չորս գավառամասերի՝ Դիլիջան (30 գյուղ), Իջևան (17 գյուղ), Շամշադին (14 գյուղ), Բարանա (15 գյուղ) [ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 106, թ. 79]: Չնայած այս փոփոխությանը՝ իր գործունեությունը շարունակեց դեռևս 1918 թ. փետրվարին ձևավորված գավառային ինքնավարությունը՝ փորձելով լուծել կենսական նշանակություն ունեցող խնդիրներ: Օրակարգային խնդիր էր գավառի անվտանգության և իրավակարգի ապահովումը. Վարչությունն ընդունեց անօրինական զենքի բռնագրավման, աննպատակ կրակոցների [ՀԱԱ, ֆ. 201, գ. 240, թ. 48-49], թուրքական զորքի մնացուկներին ապաստարան չտալու մասին որոշումներ, ինչպես նաև յուրաքանչյուր գավառամասի կոմիսար պարտավորվեց ամիսը երկու անգամ, իսկ գյուղական կոմիսարները շաբաթը մեկ անգամ շրջելու իրենց գավառամասի գյուղերում՝ վերհանելով տեղի խնդիրները և դրանց մասին տեղեկացնելով Վարչությանը [ՀԱԱ, ֆ. 201, գ. 240, թ. 50, 56]: 1918 թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ Արդարադատության նախարարության հրահանգի համաձայն՝ Վարչությունն ընդունեց «Գյուղական դատավորների ինստիտուտի վերականգնման մասին» որոշումը: Հաջորդ կարևոր ոլորտը կրթությունն էր. Վարչության կրթության բաժանմունքը՝ տեղեկացնում էր. որ իր ենթակայության տակ գտնվող տարրական և միջնակարգ դպրոցների մի մասը արդեն գործում էր (23 դպրոց, որից 2-ը միջնակարգ, 21-ը՝ տարրական) [ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 53, թ. 6]: Վարչությունը վերահսկում էր նաև սպառողական ապրանքների գները՝ թույլ չտալով դրանց անհարկի բարձրացում: Վերջինիս շնորհիվ անգամ նվազեց հացի գինը՝ 50 տուրլուց դառնալով 32 տուրլի [Պայքար, 17.02.1918, 4], բացվեցին նաև հացի փոեր: Ինքնավարության Սանիտարական բաժինն վերահսկում էր բժշկասանիտարական ոլորտը. գավառում գործում էր 3

¹1918 թ. սեպտեմբերին վարչության որոշման համաձայն՝ Դիլիջանում բացվեց գիմնազիա, որը Վարչությունից ստանում էր նյութական օժանդակություն, սակայն հետագայում դարձավ պետական դպրոց [ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 83, թ. 163]:

Դիլիջանի գավառի տեղական ինքնակառավարման մարմինների պատմությունը 1918-1920թթ.

ամբույյատոր-ֆելդշերական կայան՝ Քերքենդում, Սև Քարում, Բերդում, հիվանդանոցներ Դիլիջանում, Իջևանում:

Վարչության գործունեության «Էսեռական» շրջանը տարբեր կերպ է գնահատվել քաղաքական ուժերի կողմից: Այսպես՝ ՀԺԿ օրգան «Ժողովուրդ» թերթը, անդրադառնալով Դիլիջանի գավառային վարչության գործունեությանը, գրել է, որ Դիլիջանի գավառը ՀՀ այն միակ տարածքն է, որտեղ հայ և թուրք հարևաններն ապրում էին համերաշխ, պարենային ճգնաժամն այնքան էլ սուր չէր, ինքնավարությունը ղեկավարվում էր ժողովրդի և ոչ թե կուսակցության շահերի մասին մտածող ժողովրդական գործիչների կողմից [Ժողովուրդ, 19.09.1918, 1]: Սակայն այլ էր պետական իշխանության ներկայացուցչի կարծիքը, մասնավորապես՝ ՆԳ նախարարի իրավախորհրդատուն գտնում էր, որ Ա. Մելքոնյանն իր որոշումների մեծ մասն ընդունել է ինքնագլուխ՝ առանց ՆԳՆ հաստատման՝ խախտելով որոշումներ ընդունելու կոլեգիալության սկզբունքը [ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 240, թ. 41-43]: Բնականաբար, նման մոտեցումները երկուստեք կրում էին քաղաքական ենթատեքստ և, ինչպես գրում էր Ա. Խոնդկարյանը, ՀՀ պետական իշխանությունը, 1918 թ. հնարավորություն չունենալով ստեղծել գավառային ինքնավարություններ, տարածքային կառավարման համար գավառներում նշանակեց գավառապետեր, և այսպիսով, ստեղծվեց «անբնական» կացություն՝ գավառներից մեկում՝ Դիլիջանում, իշխանությունը գտնվում էր էսեռների ձեռքում: Ոստի, Դիլիջանի ՀՅԴ ներկայացուցիչները պահանջեցին լուծարել այդ ինքնավարությունը [Խոնդկարյան, 1934, 90-92]:

Վերջիններիս ճնշման ներքո 1918 թ. սեպտեմբերի 4-ին Վարչության ժողովում որոշվեց հրավիրել իրավասուների համագումար և ձևավորել Վարչության նոր կազմ: Ի վերջո, 1918 թ. սեպտեմբերի 25-26-ին հրավիրված իրավասուների համագումարն անվստահություն հայտնեց Վարչությանը (50 դեմ, 7 կողմ)՝ փոխելով Վարչության հիմնական կազմը: նորվեց նոր Վարչության՝ նախագահ Ռ. Տեր-Ղևոնդյան և 5 անդամ՝ Ավետիք Խաչատրյան (Էսեռ), Արշակ Նալբանդյան (Էսեռ), Ատոն Քալանթարյան (ՀՅԴ), Միքայել Ասովաձատրյան (ՀՅԴ), Վարդան Առաքելյան (ՀՅԴ), Գևորգ Մուրադյան (Էսեռ՝ այնուհետ ՀՅԴ) [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 4, 17-21]:

Փաստորեն, Դիլիջան գավառում ՏԻՄ իշխանության իրավասությունները կիսվեցին երկու քաղաքական ուժերի միջև:

Դեպքերի նման ընթացքն էսեռների և անգամ ՆԳՆ իրավախորհրդատուի կողմից որակվեցին անօրինական. ըստ նրանց՝ համագումարին ներկարկայացել էին օրենքով չնախատեսված մարդիկ, որոնք եղել են ՀՅԴ համակիրները, սակայն ոչ իրավասուներ: Նրանցից մի քանիսը, ինչպես գրում է «Ժողովուրդ» թերթը, լինելով «ապօրինի» ընտրված իրավասու, անգամ ընտրվել էին նախագահության անդամներ [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 9-14; Ժողովուրդ, 3. 10. 1918, 1]: Սակայն, ի հակակշիռ այս փաստարկների, նոր Վարչությունն, ի սկզբանե, հակաօրինական էր համարում 1918 թ. փետրվարյան համաժողովում ոչ իրավասուների կողմից ընտրված Ա. Մելքոնյանի գլխավորած Վարչությունը [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 2]: Երկուստեք մեղադրանքները երբեմն վերածվում էին անձնական վիրավորանքի [ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 208, թ. 144]:

Վերոնշյալ հարցի շուրջ քննարկումները, բանավեճերը տեղափոխվեցին խորհրդարան, և կարող էր անգամ դառնալ վարչապետ Հ. Քաջազունու հրաժարականի պատճառ: Այսպես՝ 1918

թ. հոկտեմբերի 25-ին խորհրդարանի նիստում էսեռների խմբակցության պատգամավորները ՆԳ նախարարին հարցեր ուղղեցին Դիլիջանի՝ նոր ձևավորված Վարչության վերաբերյալ, որի բացատրությունը, սակայն, չբավարարեց էսեռ պատգամավորներին: ՀՅԴ խմբակցության անդամ Հ. Սարգսյանն առաջարկեց հարցապնդումը փոխանցել խորհրդարանի Օրենսդրական հանձնաժողովին, բայց էսեռների խմբակցության անդամները մերժեցին այդ առաջարկը և պահանջեցին վերականգնել հին՝ «էսեռական» Վարչության լիազորությունները: Ի վերջո, ընդամենը մեկ ձայնի տարբերությամբ՝ 17 կողմ, դեմ 16, ընդունվեց էսեռների առաջարկը. ըստ որի՝ հին Վարչությունը պետք է գործեր այնքան ժամանակ, մինչև խորհրդարանը և դատարանը կձանաչեին գավառային մարմինների նոր կազմի օրինականությունը [Ժողովուրդ, 3. 11. 1918, 4]:

Փաստորեն, պատգամավորների ձայնատվության (քվորումի) նման հարաբերակցությունը ևս մեկ անգամ ապացուցեց, որ ՀՅԴ-ն առաջին խորհրդարանում չունեի կայուն մեծամասնություն: Ոստի, բանաձևի քվեարկությունից հետո վարչապետ Հ. Քաջագունին հայտարարեց կառավարության հրաժարարականի մասին, քանի որ մնացել էր փոքրամասնության մեջ: Սակայն, ինչպես էսեռ Ա. Խոնդկարյան էր գրում, դա սոսկ առիթ էր ուժերի նոր վերաբաշխման համար [Խոնդկարյան, 1934, 90-92]:

Հարկ է նկատել, որ որքան էլ ՀՅԴ-ն առաջին պառլամենտում չունեի կայուն մեծամասնություն, այնուամենայնիվ, նա հանդիսանում էր ամենաազդեցիկ քաղաքական ուժը, և պատահական չէր, որ հարցը լուծվեց վերջինիս օգտին: Եվ, չնայած խորհրդարանի որոշմանը, Դիլիջան գավառում, այնուամենայնիվ, տեղական իշխանությունը հանձնվեց նոր Վարչությանը [Ժողովուրդ, 3. 11. 1918, 4]:

Նորաստեղծ Վարչությունը ուներ հետևյալ բաժինները՝ 1. Տնտեսական, 2. Ֆինանսական, 3. Վերահսկման՝ (նախ.՝ Ռ. Տեր-Ղևոնդյան), 4. Լուսավորության, 5. Բժշկասանիտարական՝ (Ս. Աստվածատրյան), 6. Ճանապարհատեխնիկական (Ա. Խաչատրյան), 7. Վիճակագրական, 8. Իրավաբանական, 9. Որբանոցների, 10. Լիկվիդացիոն (Ա. Քալանթարյան), 11. Գաղթականական (Վ. Առաքելյան):

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ Վարչության անդամները միաժամանակ եղել են մի քանի բաժինների պատասխանատուներ, և նրանց պատասխանատվության տակ են գտվել դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ, սննդատու կայաններ և կենսական նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական այլ ոլորտներ:

Ըստ ՆԳՆ ներկայացուցիչ Կ. Բուդաղյանի՝ Ռ. Տեր-Ղևոնդյանի գլխավորած վարչության գործունեության շրջանում նկատելիորեն բարելավված էր որբանոցային և դպրոցական գործերը: Ինքնավարության Որբանոցային բաժնի ենթակայության տակ էր գտնվում 3 որբանոց՝ Աղդամում (77 երեխա), Քարվանսարայում (121 երեխա), Քարաղամում (60 երեխա): Լավ վիճակում էին Քարվանսարայի և Աղդամի որբանոցները: Գաղթականության բաժինը գաղթականներին ապահովում է մթերքով և այլ առաջնային նշանակության ապրանքներով, իսկ Դիլիջանում ինքնավարությունն ուներ սննդատու կայան: Սակայն անկանոն էր գործում վարչության Ֆինանսական բաժինը, թերի էին կազմված ելք ու մուտքի մատյանները, գավառում առկա էր սպեկուլյացիա, մթերքների ապօրինի արտահանում, և, չնայած կառավարությունից ստացված 1070875 ռ. դրամական օժանդակության, վատ էր կազմակերպված բնակչության սոցիալական օգնությունը [ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 524, թ.136-138]:

Դիլիջանի գավառի տեղական ինքնակառավարման մարմինների պատմությունը 1918-1920թթ.

Չնայած առկա թերացումների ՀՀ-ի դեռևս միակ այս գավառային ինքնավարության մարմինները՝ Խորհուրդը և Վարչությունը, գործեցին գրեթե մեկ տարի, որոնց էլ փոխարինեցին ընտրությունների արդյունքում ձևավորված մունիցիպալ մարմիններ:

Հարկ է նշել, որ Հայաստանի գավառներում ժողովրդավարական սկզբունքների հիման վրա ՏԻՄ-երի ձևավորելու խնդիրը միշտ եղել է կենտրոնական իշխանությունների առաջնահերթություններից, սակայն, ինչպես գրում է մենշևիկյան «Կայծ» թերթը, կառավարության քաղաքական գիծն այն էր, որ նախ պետք է երկիրը փրկել, հետո միայն իրականացնել սոցիալական բարեփոխումներ [Կայծ, 9. 02. 1919, 2]: Սակայն 1919 թ. երկրի աստիճանաբար կայունացող իրավիճակը հնարավորություն տվեց կառավարությանը ձեռնամուխ լինել գավառային ՏԻՄ-երի ձևավորմանը:

Դրա համար իրավաօրենսդրական հիմք ծառայեց 1919 թ. մայիսի 23-ին կառավարության կողմից հաստատված «ՀՀ մի քանի գավառներում զեմստվոյական հաստատություններ հիմնելու մասին» օրենքի (6 հոդված, 13 կետ և հավելված) ընդունումը: Համաձայն որի՝ մինչև ՀՀ ՏԻՄ-երի մասին հատուկ կանոնադրության հրատարակելը, Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Սուրմալուի, Դարալագյազի գավառներում պետք է կիրառվեր Անդրկովկասյան կոմիսարիատի 1918 թ. հունվարի 5-ին հաստատած Անդրկովկասյան զեմստվոյական հաստատությունների «Ժամանակավոր Պոլոժենիան»՝ ՀՀ տեղական պայմաններին համապատասխան փոփոխություններով և լրացումներով (հոդ. 1-ին), իսկ իրավասուների ընտրությունները կազմակերպելվելու էին Ժամանակավոր կառավարության 1917 թ. մայիսի 21-ին հաստատած «Նահանգական և գավառական զեմստվոյական իրավասուների ընտրության ժամանակավոր կանոններով»՝ դարձյալ համապատասխան փոփոխություններով (հոդ. 2-րդ): Գավառային խորհրդի իրավասուների առաջին կազմը ընտրվելու էր երկու տարով:

Այսպիսով, ըստ վերոնշյալ օրենքի՝ Դիլիջանի գավառում ևս նախատեսված էին կազմակերպել տեղական իշխանության նոր՝ ընտրովի մարմիններ: ՆԳ նախարարի Ս. Մանասյանի թիվ 250 հրամանով 1919 թ. հուլիսի 16-ին Ա. Միքայելյանը նշանակվում է Դիլիջանի գավառային ինքնավարության ԿԸՀ-ի նախագահ՝ ամսական 3000 ռ. աշխատավարձով [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 88, թ. 2]: Հինգ հոգուց բաղկացած ԿԸՀ-ը գավառը բաժանեց Դիլիջանի, Իջևանի (Քարվանսարայի), Կոթիի, Շամշադինի ընտրական շրջանների, որոնցից յուրաքանչյուրում գյուղացիների ցուցակագրման համար նշանակեց հատուկ հրահանգիչներ և այլն: Փոփոխվեցին կամ լրացվեցին պառլամենտական ընտրացուցակները, ըստ որի՝ ընտրական իրավունք ունեին 33960 մարդ՝ Դիլիջանի ընտրական շրջանում՝ 12124 ընտրող, Իջևանում՝ 6792, Կոթիում՝ 7330, Շամշադինում՝ 7714:

Մի շարք խոչընդոտների՝ փոխադրական միջոցների բացակայության, քվեաթերթիկների տպագրության ձգձգման, դաշտային աշխատանքների պատճառով հանձնաժողովի նախատեսած օրվա՝ սեպտեմբերի 14-ի փոխարեն ընտրությունները կայացան սեպտեմբերի 21-ին [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 245, թ. 14, 51; նույն տեղում գ. 33, թ. 34]: Ընտրություններին մասնակցեցին երեք քաղաքական ուժ՝ ՀՅԴ (թիվ 1), ՀԺԿ (թիվ 2), Ղազախ-Շամշադին գյուղացիական միությունը (թիվ 3): Վերջինս գտնվում էր էսեռների ազդեցության տակ, և ցանկը գլխավորում էր նախկին (1918 թ. փետրվար) վարչության անդամ Ա. Տեր-Մարգարյանը: Այս ցանկի մեջ ներգրավված էին նաև

ազգային փոքրամասնության՝ ռուս, թուրք ներկայացուցիչներ: Ընտրությունների արդյունքում ՀՅԴ ստացավ 10410 քվե (31 իրավասու), ՀԺԿ՝ 2134 քվե (4 իրավասու), Ղազախ-Շամշադին միությունը՝ 4490 քվե (9 իրավասու) [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 245, թ. 1-3]: Ընտրությունների օրինականությունը վիճարկեցին և՛ ՀԺԿ-ն, և՛ էսեռները: Այդ կապակցությամբ ՀԺԿ պաշտոնաթերթ «Ժողովուրդ»-ը գրեց, որ միամտություն է կարծել, որ ընտրությունները կլինեն օրինական, սակայն «...սուտը, կեղծիքը, բռնությունը երբեք չեն կարող ստեղծել հաստատուն իշխանություն, որ այդ հիմքերի վրա ստեղծված իշխանությունը մնայուն չի կարող լինել և մի օր անպատճառ կխորտակվի հենց ժողովրդի ձեռքով, որի կամքը և խիղճը բռնաբարվում է» [Ժողովուրդ, 22.10, 1919, 2]: Սակայն, ըստ ընտրությունների վերջնարդյունքի, վերոնշյալ բոլոր քաղաքական ուժերը հաղթահարեցին ընտրական շեմը՝ Խորհրդում ամրագրելով իրենց իրավասության աթոռները:

1919 թ. սեպտեմբերի 24-ին Թովուզ գյուղում գումարված Շամշադինի տեղամասային հանձնաժողովի նիստում էսեռ Լ. Թումանյանը հայտարարեց, որ որոշ գյուղերում (Հախում, Նավար, Ներքին Կարմիր Աղբյուր) խախտվել էին ընտրությունների ուղղակիության, գաղտնիության սկզբունքները, և այն վերականգնելու համար դիմեց դատարան [ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 242, թ. 3-4; նույն տեղում գ. 249, թ. 1]: Սակայն ՆԳ նախարար Ս.Մանասյանը գտավ, որ դատական գործընթացը նոր իրավասուների Խորհրդի բացման համար չի կարող խոչընդոտ հանդիսանալ:

Գավառային խորհրդի առաջին նիստի բացման խոչընդոտ հանդիսացավ մեկ այլ հանգամանք՝ Դիլիջանը գավառային ինքնավարության և գավառի կենտրոնը ճանաչելու մասին պառլամենտի 1919 թ. սեպտեմբերի 16-ին ընդունած օրենքը: Իջևանից և Շամշադինից ընտրված ՀՅԴ իրավասուները, դժգոհելով պառլամենտի այդ որոշումից, որպես բողոքի նշան, հրաժարվեցին կատարել 1919 թ. սեպտեմբերի 6-ի՝ պառլամենտի՝ Խորհրդի առաջին համագումարի աշխատանքները 1919 թ. հոկտեմբերի 26-ին սկսելու մասին կարգադրությունը [ՀԱԱ, ֆ. 201, գ. 245, թ. 16, 70-76]: Իջևանը՝ ինքնավարության կենտրոն դարձնելու պահանջով հանդես եկան նաև Իջևանի, Շամշադինի, Կոթիի գյուղական համայնքերը՝ պատճառաբանելով, որ հեռավոր գյուղերի բնակիչները ստիպված էին գավառի կենտրոն՝ Դիլիջան, գալու համար հաղթահարել դժվարանացելի ճանապարհ, որը ձմռանը երբեմն դառնում էր անհաղթահարելի [ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 245, թ. 22-23]:

Հիշյալ շրջանների իրավասուներ Ռ. Տեր Ղևոնդյանը, Մ. Աստվածատրյանը, Մ. Մելիք Մաթևոսյանը և ուրիշներ, անտեսելով կենտրոնական իշխանությունների կարգադրությունները, հրաժարվեցին ներկայանալ Դիլիջանում գումարվելիք իրավասուների համագումարին և անգամ նախապատրաստվում էին այն հրավիրել Իջևանում [ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 49, թ. 8]: Նշանակված օրը՝ 1919 թ. հոկտեմբերի 26-ին, ՆԳ նախարարի օգնական և Դիլիջանի Խորհրդում իրավասու ընտրված Ս. Մանասյանը Խորհրդի անդամիկ նստաշրջանին մասնակցելու համար եկավ Դիլիջան, որտեղ, ըստ կարգի, Վարչությունը՝ Ռ. Տեր-Ղևոնդյանի նախագահությամբ, պետք էր Խորհրդի բացման կապակցությամբ կազմակերպչական աշխատանքներ կատարեր, սակայն Վարչության անդամներն անգամ չէին ժամանել գավառի կենտրոն: Դեռ ավելի, Վարչության անդամները՝ Ռ. Տեր-Ղևոնդյանը և Ա. Քալանթարյանը, հայտարարեցին, որ չնայած ՆԳ

¹ Տեղի բնակչության, կենտրոնական իշխանության, համայնքային վարչության ներկայացուցիչների ժողովը որոշել էր Քարվանսարա գյուղը անվանել Իջևան, իսկ գավառը՝ Իջևանի գավառ (Ժողովուրդ, 19. 01. 1919, 3):

Դիլիջանի գավառի տեղական ինքնակառավարման մարմինների պատմությունը 1918-1920թթ.

Նախարարի կարգադրության, Դիլիջան չեն գալու և կրկին պահանջեցին նիստը բացել Իջևանում: Քաղաքական մյուս ուժերը՝ ՀԺԿ և անկուսակցականների խմբակցությունը՝ Գյուղացիական միությունը, փորձեցին նախաձեռնությունը վերցնել իրենց ձեռքը՝ հոկտեմբերի 27-ին Դիլիջանում Ս. Հարությունյանի (ՀԺԿ) նախագահությամբ հրավիրելով խորհրդակցական ժողով, որն էլ Վարչության անդամների գործունեությունը համարելով հակաօրինական՝ կառավարությունից պահանջեց նրանց ենթարկել քրեական պատասխանատվության [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 245, թ. 76]: Սակայն ՀՅԴ-ն ներկուսակցական հակասությունները փորձեց լուծել կուսակցական մարմինների միջոցով: 1919 թ. նոյեմբերի 7-ին ՀՅԴ Երևանի Կենտրոնական կոմիտեն Վարչության անդամների գործողությունները որակեց անթույլատրելի վարմունք և որոշեց նրանց՝ Ռ. Տեր-Ղևոնդյանին, Ա. Քալանթարյանին, Ս. Աստվածատրյանին հեռացնել կուսակցության շարքերից և գործը հանձնեց կուսակցական դատական ատյանին [Աշխատավոր, 26. 03. 1920, 3]:

Փաստորեն, ՏԻՄ Վարչության անդամները, լինելով ՀՅԴ անդամներ, հակադրվել էին և՛ կենտրոնական իշխանություններին, և՛ կուսակցությանը՝ ցուցաբերելով կուսակցական անկարգապահություն՝ վտանգելով ներպետական կայունությունը: Հարկ է փաստել, որ պետական իշխանության մարմիններին հակադրվելը, մասնավորապես՝ գավառային ինքնավարությունների իրավասությունների ընդլայնման, ֆինանսական օժանդակության տրամադրման հարցերի շուրջ, բնորոշ էին գավառային ինքնավարություններին, սակայն Դիլիջանի գավառային խորհրդի նորընտիր անդամների ինքնագլուխ, անօրինական գործունեության ծավալումը, կենտրոնական իշխանությունների կարգադրություններին սկզբունքորեն հակադրվելը հակապետական վարքագծի դրսևորումներ էին: Վերջիններիս հակաժողովրդավարական գործողությունների առթիվ «Ժողովուրդ»-ը գրեց, որ վերջապես գավառի բնակչությունը կազատվի նրանցից, որոնք վարկաբեկեցին գավառային ինքնակառավարման գեղեցիկ գաղափարը:

Գավառում տեղական ինքնակառավարման համակարգը փոքր ինչ հնարավոր եղավ ամրապնդել միայն 1919 թ. դեկտեմբերի 9-ից հետո, երբ Դիլիջանում գումարված իրավասուների համագումարը գավառի ինքնակառավարման համար ընդունեց մի շարք որոշումներ, ընտրեց Խորհրդի նախագահության և Վարչության կազմը: Խորհրդի նախագահ ընտրվեց Ա. Ղազարյանը (ՀՅԴ), փոխնախագահ՝ Վ. Բաբայան (ՀՅԴ), քարտուղար՝ Մայիլյանը (ՀՅԴ) [Ժողովուրդ, 19. 12. 1919, 3], Վարչության նախագահ՝ Ն. Ջաղեթյանը (ՀՅԴ ցուցակով, սակայն անկուսակցական) և 5 անդամ, որոնցից երկուսը ընդդիմությունից [Ժողովուրդ, 13. 01. 1920, 2]:

Խորհուրդը որոշեց կրկին դիմել կենտրոնական իշխանություններին՝ գավառի և ինքնավարության կենտրոնն Իջևանը ճանաչելու և կառավարության ենթակայության տակ գտնվող որոշ հիմնարկությունների, մասնավորապես՝ գավառային միլիցիան ինքնավարությանը փոխանցելու խնդրանքով: Որոշվեց նաև կառավարությունից խնդրել 1 մլն փոխառություն, բացել կենտրոնական դեղատուն, գավառի տարբեր գյուղերում հիվանդանոցներ, ֆելդշերական կայաններ և այլն [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 43]:

Այս նիստում խիստ քննադատության ենթարկվեց նախկին Վարչության սոցիալական, ֆինանսատնտեսական քաղաքականությունը. վերջինիս անդամներին մեղադրեցին փողերի յուրացման մեջ: Խորհուրդը որոշեց ընտրել հատուկ վերստուգիչ հանձնաժողով՝ 5 անդամից

բաղկացած, որն էլ մինչև հաջորդ նաստաշրջանի սկիզբ (2 ամիս հետո) պետք է ուսումնասիրեր և հաշվետվություն ներկայացներ նախկին Վարչության ֆինանսական հաշիվների մասին [Ժողովուրդ, 19. 12. 1919, 3]:

Արդյունավետ էր գործում նաև Ն. Ջաղեթյանի գլխավորած Վարչությունը: Դրան նպաստեց Դիլիջանի գավառային ինքնավարության իրավասությունների ընդլայնումը: Այսպես՝ 1920 թ. փետրվարի 6-ին կառավարությունը վերջինիս լիազորեց, նախարարությունների հետ փոխադարձ համաձայնությամբ, իր ենթակայության տակ վերցնել գավառային տարբեր հիմնարկություններ: Այս որոշմանը հաջորդեց Վարչության և մի շարք նախարարությունների միջև գործառույթների, գույքի, վարկերի՝ Վարչությանը փոխանցման մասին պայմանագրերի կնքումը: 1920 թ. մարտի 4-ին Վարչության նախագահ Ն. Ջաղեթյանի ու Խնամատարության և վերաշինության նախարարության միջև կնքվում է գավառի բժշկական (բացի դատական) հիմնարկությունների՝ Վարչության ենթակայության տակ անցնելու մասին պայմանագիրը, իսկ մարտի 5-ին՝ բաշխման կոմիտեի փոխանցման մասին: 1920 թ. մարտի 3-ին Գյուղատնտեսության և պետական գույքի նախարարության ու Վարչության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Վարչությանը պետք է փոխանցվեին գյուղատնտեսական հիմնարկությունները՝ համապատասխան գույքով, մասնագետներով, վարկերով [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 49, 54, 56, 6]: 1920 թ. մարտի 13-ին բոլոր այս պայմանագրերը հաստատվեցին Նախարարների խորհրդի կողմից [ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 133^{1-ին}, թ. 44]:

Հաղորդակցության նախարարությունը ևս համաձայնվեց Իջևան-Շամշադին ճանապարհի կառուցման աշխատանքները վերապահել վարչությանը, իսկ Կրթության նախարարությունը՝ ինքնավարությանը փոխանցել որոշակի գործառույթներ՝ դպրոցների տնտեսական մասի ղեկավարում, տարբեր դասընթացների (համալսարանների) կազմակերպում և այլն [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 50, 61]: Ի դեպ, վերոհիշյալն արդեն իսկ վկայում էր, որ կառավարությունը վճռական էր տրամադրված գավառային ինքնավարությունների լիազորությունների մեծացման հարցում և այդ ուղղությամբ կատարում էր գործնական քայլեր:

Վարչությունը սերմանման արդյունավետության բարձրացման համար գոտիավորեց գյուղերը, որոշեց գարնանացանին գյուղացիությանն ապահովել սերմացուով [ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 122, թ. 713]:

1920 թ. ապրիլին Ն. Ջաղեթյանի անմիջական ջանքերի շնորհիվ որոշ չափով կանխեց հայ-թաթարական ընդհարումները: 1920 թ. ապրիլի 9-ին Ուզունթալա գյուղում մի կողմից՝ Ն. Ջաղեթյանը, մյուս կողմից՝ Ղազախի գեներալ-նահանգապետի օգնականը, Ղազախի բնակչության ներկայացուցիչները ստորագրեցին հայկական և թուրքական (թաթարական) գյուղերի միջև ընդհարումների դադարեցման մասին համաձայնագիր, որը նախատեսում էր նաև Ադրբեջանի հետ անհրաժեշտ ապրանքափոխանակության կազմակերպում [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 33]: Սակայն, ինչպես գրում էր «Ժողովուրդ» թերթը, ժողովրդի միակ հույսը՝ Վարչության նախագահ Ն. Ջաղեթյանը, որը իր գաղափարական մաքրությամբ և ընդունակություններով կարող էր ծառայել ժողովրդին, դարձավ բռնկիկների զոհը [Ժողովուրդ, 22. 09. 1920, 2]:

1920 թ. ապրիլին՝ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, գավառում ստեղծվեց անկայուն իրադրություն: Ապստամբ գյուղացիների ընդվզումները ճնշելու համար պատժիչ զորաջոկատների հետ Սև քար է մեկնում նաև իրավասու Ս. Մանասյանը, Ն. Ջաղեթյանը, որտեղ էլ նրանց

Դիլիջանի գավառի տեղական ինքնակառավարման մարմինների պատմությունը 1918-1920թթ.

զինաթափում են և գերեվարում: Բոլշևիկներին հաջողվեց երկու անգամ՝ մայիսին և հունիսին, գրավել Իջևանը, որտեղ գտնվող Վարչությունը ստիպված էր հեռանալ Դիլիջան: Երբ 1920 թ. հունիսի 20-22-ին Իջևանը կրկին հայտնվեց բոլշևիկների ձեռքում, վերջիններս իրենց շտաբը տեղակայեցին գավառային ինքնավարության գրասենյակում՝ ոչնչացնելով վերջինիս և դպրոցական շրջանային տեսչության գրագրությունները, փաստաթղթերը

Իջևանից բոլշևիկների հեռացումից հետո Վարչության նախագահի պարտականությունները ստանձնեց Պ. Աթաբեկյանը: Նա անհնարին էր համարում Վարչության հետագա գործունեությունն Իջևանում, ուստի, կառավարության համաձայնությամբ Վարչությունը ժամանակավոր տեղափոխվեց Դիլիջան [ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 106, թ. 99; ֆ. 201, ց. 1, գ. 33, թ. 13-14]: Բոլշևիկյան շարժումները տարածվել էին գավառի շատ բնակավայրերում, սակայն անգամ նման պայմաններում. հունիսի 15-ին ոստիկանությունը հանձնվեց Վարչությանը: Վարչությունը ոստիկանապետի պաշտոնը վստահեց փոխգնդապետ Ս. Տեր-Մարտիրոսյանին, որի հրաժարականից հետո՝ Վարչության անդամ Ա. Մելիք Ալավերդյանին: Սակայն ՆԳՆ տեղեկացնում էր, որ Վարչության անդամը չէր կարող ստանձնել միլիցապետի պարտականություններ: Վարչության խնդիրն էր անմիջապես միլիցապետ հրավիրել հակառակ դեպքում՝ ՆԳՆ սպառնում էր փակել միլիցայի վարկերը [ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 482, թ.208]:

Բոլշևիկյան խռովությունները ճնշվելուց հետո գավառային ՏԻՄ-ը վերադարձավ իր բնականոն գործունեությանը: 1920 թ. գավառային խորհրդի ամառային նստաշրջանը գումարվեց հուլիսի 27-ին՝ բժիշկ Արշակ Ղազարյանի նախագահությամբ: Հարկ է նկատել, որ եթե Էջմիածնի և Երևանի համայնքային խորհուրդներում 1920 թ. հիմնականում քննարկվում էին սոցիալ-տնտեսական և իրավական (գավառային ինքնավարությունների իրավասություններին վերաբերող) բնութի հարցեր, ապա Դիլիջանի խորհրդի ամառային նստաշրջանի օրակարգի կարևորագույն հարցը վերաբերում էր բոլշևիկյան հուզումների հետևանքով գավառում առաջացած անկայուն իրադրությանը: Խորհուրդը ՀՀ իշխանություններից խնդրեց միջոցներ ձեռնարկել գերությունից ազատել բոլշևիկների մոտ գտնվող Վարչության նախագահ Ն. Ջաղեթյանին, իրավասուներ Ս. Մանասյանին, Սուքիասյանին [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 90]:

Վարչության հրավիրած մի շարք նիստերում քննարկվել են նաև գավառի մի շարք խնդիրներ՝ անվտանգային, գյուղատնտեսական (դաշտային մկների և կարկտահարության հետևանքով գյուղատնտեսությանը հասցված վնասների վերացում) և այլն [ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 159, թ. 1, 4]:

Գավառի անվտանգության ապահովման համար խիստ կարևոր էր 1920 թ. սեպտեմբերի վերջին Վարչության կողմից նշանակված միլիցապետ Աբգար Սուրադյանի գործունեությունը: Վերջինս անձամբ շրջում էր գավառի տարբեր շրջաններում՝ ձեռնարկելով խիստ միջոցառումներ, հատկապես՝ դասալսության դեմ մղվող պայքարում: Գավառի պաշտպանության նպատակով Վարչությունը ստեղծեց ձիավոր կամավորական գունդ [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 482, թ. 208, 264-265, 298; նույն տեղում, գ. 249, թ. 79]:

Հարկ է նշել, որ Դիլիջանի գավառային ինքնավարությունը ժամանակի ընդգրկվածության առումով եղել է ամենատևականը, սակայն, պայմանավորված ներքաղաքական մի շարք հանգամանքերով, այն կարելի է համարել ամենաանկայունը և, ինչպես նշում էր պառլամենտի

անդամ Խ. Պապայանը (ՀՅԴ) պառլամենտին ներկայացրած իր զեկույցում, Դիլիջանի գավառն անցյալում և տվյալ ժամանակաշրջանում ենթարկվել է «ռուսամոլությանը», և այդտեղ վտանգավոր քաղաքականություն են վարել էսեռները, անգամ օգնել են բոլշևիկներին [ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 247, թ. 94-95]:

Եզրակացություններ: Այսպիսով՝ կարող են եզրահանգել.

- 1) 1918 թ. փետրվարին ստեղծված Դիլիջանի գավառային ինքնավարության շնորհիվ Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից վիճելի ճանաչված Ելիզավետպոլ գավառում հաստատվեց հայկական իշխանություն՝ լուծելով բնակչության անվտանգային, սոցիալ-տնտեսական խնդիրներ: Կարող ենք նաև պնդել, որ այս միջոցառումների շնորհիվ նախկին Ելիզավետպոլի գավառի բազում գյուղեր, այդ թվում թուրքաբնակ (թաթարաբնակ) գյուղեր, ընդգրկվեցին նորանկախ Հայաստանի սահմանների մեջ:
- 2) ՀՀ անկախության հռչակումից հետո պետական իշխանությունը փորձեց ուժեղացնել իր ազդեցությունը գավառում՝ փոփոխելով հիմնականում էսեռներից կազմված Դիլիջանի գավառային ՏԻՄ-ի հիմնական կազմը և այն համալրելով ՀՅԴ անդամներով:
- 3) ՀՀ կենտրոնական իշխանությունները կարևորում էին ժողովրդավարական սկզբունքների վրա հենված ՏԻՄ համակարգի ձևավորումը և ամրապնդումը: Դա է վկայում, այն հանգամանքը, որ 1919 թ. սեպտեմբերին Դիլիջան գավառում կազմակերպված նոր ընտրությունների արդյունքում ձևավորվեց բազմակուսակցական գավառային խորհուրդ, որի մեջ ընդգրկվեցին ընտրական շեմը հաղթահարած քաղաքական երեք ուժեր՝ ՀՅԴ-ի, ՀԺԿ-ի և Ղազախ-Շամշադին գյուղացիական միության իրավասուներ: Սակայն պետք է նշել, որ այդ ընտրություններն ուղեկցվել են ընտրակեղծիքներով:
- 4) Վերոնշյալ ընտրությունների արդյունքում ձևավորված ՏԻՄ-ի գործադիր մարմինը՝ վարչությունը, գործեց առավել արդյունավետ, երբ նախագահ ընտրվեց Ն. Ջաղեթյանը (ՀՅԴ): Նրա կառավարման օրոք ընդլայնվեցին ՏԻՄ իրավասությունները, ինչպես նաև հնարավոր եղավ կանխել հայ-թաթարական ընդհարումները, որոնք լուրջ վտանգ էին Ադրբեջանին սահմանակից այս գավառի ազգաբնակչության համար:
- 5) Դիլիջանի գավառային ՏԻՄ-ը կարևոր դեր է կատարել սոցիալ-տնտեսական, կրթական կյանքի կազմակերպման գործում. վերջինիս ենթակայության տակ են գտնվել տարրական դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ, ֆելդշերական, սննդատու կայաններ և հասարակական նշանակության այլ հաստատություններ:
- 6) ՏԻՄ-ի կանոնավոր գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցան մի շարք գործոններ՝ ներկուսակցական, միջկուսակցական կոնֆլիկտները և ներքաղաքական այլ հանգամանքներ, սակայն առավել քայքայիչ էին կոմունիստների իրականացրած հակապետական քայլերը, մասնավորապես՝ բոլշևիկյան ապստամբությունը, վերջիններիս պառակտիչ գաղափարաքաղաքական քարոզչությունը:

Դիլիջանի գավառի տեղական ինքնակառավարման մարմինների պատմությունը 1918-1920թթ.

- 7) Դիլիջանի գավառային ՏԻՄ-ը՝ հայ իրականության մեջ գավառային ինքնավարության «անդրանիկ զավակը», պատմության գիրկն անցավ ՀՀ անկախ պետականության կորստի հետ համընթաց:

Գրականության ցանկ

Խատիայան Ալ., 1932 (օգոստոս), Քաղաքապետի մը հիշատակները, «Հայրենիք», Բոստոն, N 10, էջ 102-104:

Խոնդկարյան Ա., 1934 (հուլիս-օգոստոս), Օպոզիցիան հանրապետական Հայաստանում, «Վէմ», Փարիզ, թիվ 2, էջ 90-92:

Աշխատավոր, 26.03. 1920, 3, Թիֆլիս:

Ժողովուրդ, 19.01. 1919, 3, Երևան:

Ժողովուրդ, 19. 09. 1918, 1, Երևան:

Ժողովուրդ, 3. 10. 1918, 1, Երևան:

Ժողովուրդ, 3. 11. 1918, 4, Երևան:

Ժողովուրդ, 22. 10. 1919, 2, Երևան:

Ժողովուրդ, 19. 12. 1919, 3, Երևան:

Ժողովուրդ, 13. 01. 1920, 2, Երևան:

Ժողովուրդ, 21. 07. 1920, 1, Երևան:

Ժողովուրդ, 22. 09. 1920, 2, Երևան:

Ժողովրդի ձայն, 16. 10. 1918, էջ 3, Թիֆլիս:

Կայծ, 9.02. 1919, էջ 2, Երևան:

Հառաջ, 5.03.1920, էջ 2, Երևան:

Պայքար, 17. 02. 1918, էջ 4, Թիֆլիս:

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 49, թ. 8:

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 133^{1-ին}, թ. 44:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 33-38:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 33, թ. 13:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 33, թ. 13-14:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 33, թ. 34:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 88, թ. 2:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 2:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 242, թ. 3-4:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 4, թ. 17-21:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 9-14:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 13-14:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 41-43:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 48-49:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 240, թ. 50, 56:

History and Culture

- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 245, թ. 1-3:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 245, թ. 14, 51:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 245, թ. 16, 70-76:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 245, թ. 22-23:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 245, թ. 76:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 1:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 43:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 49, 54, 56, 63:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 50, 61:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 90:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 249, թ. 79:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 482, թ. 208:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 482, թ. 208, 264-265, 298:
- ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 524, թ. 136-138:
- ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 122, թ. 713:
- ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 159, թ. 1, 4:
- ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 208, թ. 144:
- ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 53, թ. 6:
- ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 106, թ. 79:
- ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 106, թ. 99: